

ՔԱՆԱԾՏԵՂՄԱԿԱՆ

Տ Ի Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Քրնարածեւ քրնարածայն կը հանգչի,
 Թեւերուն մէջ բըլուններուն դալկահար,
 Բաբախուն սիրն ամայութեան անջըրդի,
 Կըսո՞ւ մ'երկինք վերէն կարծես իջած վար:

Ի՞նչ գգուանով իր ոսկերուն կը հըպին,
 Ցամաք ու քար, լեռներ իրեն խոնարհած,
 Ինք ինքնասոյզ կը հեծեծէ վիշտ մը հին,
 Նայուածքին մէջ բըռնած երկինքն ու Առնուած:

Իր պատրանքին շիրիմ եզրը կոյսին պէս,
 Ան չհրազեք ալ սիրական ու փեսայ,
 Ամպն իր դէմքին ալ չէ՛ շրջաւոր բեհեզ,
 Լուսնակն իր ծոց ի գուր վարդեր կը տըղայ:

Միայն երբեմն երազը իր սրբազան,
 Զուրին վըրայ, ախոսն իր հին կը բանայ,
 Ուրկէ որ մը քաղց Աստուածը պարման,
 Դէպի խաչն իր, լուսեղինուած նոր համբայ:

Երուսաղէմ

ԵՂԻՎԱՐԴ

Մ Ե Ռ Ե Ա Լ Ծ Ո Վ

Ծո՞վ, քէ անցեալի աղտաղտին ու աղ,
 Մեռած դարերու իրերուն դագաղ,
 Որուն շուրջ լեռներ Մովսէսի անցող
 Տառապանքն ունին, մեռնիլ չկրցող:

Ու անոնք կարծես յաւերժութեան մէջ,
 Կը փորձեն հեզել խորհուրդը անէջ.
 Ծովակլին արծաթ մեռելութեան ծոց
 Դիտելով դէմքերն իրենց բազմախոց:

Տառապած ցեղի մ'արատաւն է ան,
 Մեռած փառքերու մոխիրը հալած.
 Տակաւին լեռներ իր ոսկին կուլան:

Թէեւ մահուան մէջ, բայց չի մեռնիր ան,
 Ծրծելով անյագ ուղին թորդանանի
 Անմեռ հաւասփ ջուրէն կենդանի:

Երուսաղէմ

ԵՂԻՎԱՐԴ